Արձանագրություն N 3

«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար «Սեղմված բնական գազ»-ի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր

29 դեկտեմբեր 2023թ.
ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ոսկան Եղիազարյան
Հանձնաժողովի անդամներ՝
համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի,փուրիզմի,առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հակոբյան /արձակուրդում գտնվելու պատճառով Գ.Հակոբյանին փոխարինում է նույն բաժնի առաջատար մասնագետ Իշխան Եղիազարյանը/
համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի,փուրիզմի,առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի առաջատար մասնագետ Կարեն Աղալոյան
համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական,քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ Կարեն Ներսիսյան
համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական,եկամուտների հաշվառման,հավաքագրման բաժնի պետ Նարինե Խաչատրյան
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանությունների շտկման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ **«Լարգո- Վինչ» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում և սահմանված կարգով շտկվել են **«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/2»** ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանությունները:
1.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ **«Լարգո- Վինչ» ՍՊԸ-ի** հայտը էլեկտրոնային համակարգում հանձնաժողովի կողմից գնահատել՝ **բավարար:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. ***«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/2» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցի, էլեկտրոնային աճուրդի գնահատման նիստի արդյունքների ամփոփման և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին***

Հանձնաժողովը որոշեց՝
2.1 «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/2» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել **«Լարգո- Վինչ» ՍՊԸ-ն**՝ որպես բավարար գնահատված միակ մասնակից:
2.2 Հաստատել ***«ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/2»*** ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
2.3 **«Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1) ենթակետի համաձայն՝** սույն ընթացակարգի մասով անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:
2.4 Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակումից հետո, պայմանագրի կնքման նպատակով, ընթացակարգի ընտրված/հաղթող/ մասնակցին ծանուցել՝ ներկայացնելով կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկել **5 աշխատանքային օրվա ընթացքում** ներկայացնել **պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 տոկոսի չափով: Պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացվում են՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Գնահատող հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	**Ստորագրությունը**
Նախագահ՝ Ոսկան Եղիազարյան	
Անդամներ՝ Նարինե Խաչատրյան	
Իշխան Եղիազարյան	
Կարեն Աղալոյան	
Կարեն Ներսիսյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	